

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2017թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ՍԱՐԳԻՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության **1999** թվականի օգոստոսի **31**-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N **551** որոշմամբ հաստատված կարգի **2**-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ Սարգիս Հովսեփյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Պուշկինի փողոց հ. **51** հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՄԱՐԳԻՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԻՍՅՆ վաստակավոր բժիշկ Սարգիս Հովսեփյանը ծնվել է **1888**թ. Կոստանդնուպոլսում: Մովորել է Կ. Պոլսի Գաղատիա թաղամասի Կեդրոնական վարժարանում: **1913**թ. ավարտել է Կ. Պոլսի բժշկական համալսարանը, այնուհետև՝ ուսումը շարունակել է Լայպցիգում, ապա՝ Ժնևում և ստացել բժշկի մասնագիտություն:

1914թ. վերադառնալով Թուրքիա՝ նշանակվել է Տրապիզոնի նահանգի Թերմե գավառի քաղաքապետարանի բժիշկ:

1914թ.՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գորակոչվել է օսմանյան բանակ և ծառայել այնտեղ՝ որպես զինվորական բժիշկ: Թուրքիայի կողմից մահվան գաղտնի դատապարտումից խուսափելու համար փախուստի է դիմել և հանգրվանել Թիֆլիսում:

1915թ. մարտին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի միջնորդությամբ տեղափոխվել է Էջմիածին և բժշկական օգնություն ցուցաբերել ավելի քան **75 000** գաղթականի:

1915թ. Սարգիս Հովսեփյանը տեղափոխվել է Դիլիջան, որտեղ «Համառուսական քաղաքների միություն» կազմակերպության գծով հիմնել է գաղթականական հիվանդանոցներ ու որբանոցներ:

1916թ., Կարինի գրավումից հետո նշանակվել է Կարինի քաղաքային հիվանդանոցի գլխավոր բժիշկ, ապա տեղափոխվել է Թիֆլիս: Հետագայում հաջորդաբար աշխատել է Էջմիածնի, Դիլիջանի, Իջևանի հիվանդանոցներում՝ որպես գլխավոր բժիշկ:

1920թ. տեղափոխվել է Շամշադին և Բերդ ավանում հիմնադրել ու կազմակերպել շրջանի առաջին հիվանդանոցը: Այնուհետև՝ հիվանդանոցի հիմքի վրա սկսել է շրջանի համար ապագա բուժքույրերի ուսուցման գործը:

Մինչև **1948**թ. եղել է Շամշադինի հիվանդանոցի գլխավոր բժիշկը, միաժամանակ կատարելով առողջապահության բաժնի վարիչի և պետական սանիտարական տեսուչի պարտականությունները:

1928թ. սկսած վերապատրաստման ու կատարելագործման մի քանի դասընթացներ է անցել Լենինգրադում: Հանրապետական և միութենական բազմաթիվ գիտաժողովների է մասնակցել:

Նա եղել է Հայաստանում ամենամեծ աշխատանքային վաստակ (**68** տարի) ունեցող բժիշկը: **13** անգամ ընտրվել է Շամշադինի շրջանային խորհրդի ղեկավար և **25** տարի եղել շրջխորհրդի գործադիր կոմիտեի անդամ:

Սարգիս Հովսեփյանը պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» և Լենինի շքանշաններով, արժանացել է ՀՀ վաստակավոր բժշկի և ԽՍՀՄ առողջապահության գերազանցիկի կոչումների:

Սարգիս Հովսեփյանը մահացել է **1975**թ. Երևանում:

ՀԻՍՅՆ վաստակավոր բժիշկ Սարգիս Հովսեփյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Պուշկինի փողոց հ. **51** հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Հայկական բժշկական ասոցիացիայի նախագահ Պ. Զելվեյանի և ՀՀ քաղաքացի Ա. Պետրոսյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության **1999** թվականի օգոստոսի **31**-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N **551** որոշմամբ հաստատված կարգի **2**-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկման և ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԱՐԳԻՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սարգիս Հովսեփյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԱՐԳԻՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սարգիս Հովսեփյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ